Եվրոպական միություն և Եվրոպայի խորհուրդ Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2021

#strongertogether

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Դատական բարեփոխումները և կոռուպցիայի դեմ պայքարը կարևոր են Արևելյան գործընկերության տարածքում պետական ինստիտուտների նկատմամբ քաղաքացիների ավելի մեծ վստահության, ներդրումների համար ապահով միջավայրի և երկարաժամկետ տարածաշրջանային կայունության համար:

Հիմնվելով այս համոզմունքին և խարսխված համընդհանուր արժեքների վրա՝ Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը միասին աշխատում են Արևելյան գործընկերության երկրների հետ՝ ԵՄ 2020 թիրախային արդյունքների ձեռքբերմանը և Եվրոպայի խորհրդի նկատմամբ ստանձնած հանձնառությունների իրականացմանը նպաստելու նկատառումով: Դա արվում է Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ) ծրագրի միջոցով, որը մեկնարկել է որպես համատեղ նախաձեռնություն 2014 թվականին: ԳԼԿ-ն հատուկ հարմարեցված աջակցություն է տրամադրում Արևելյան գործընկերության երկրներին՝ օրենսդրությունը և պրակտիկան մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելու նպատակով:

2017 թվականից ի վեր ԳԼԿ-ն սևեռվել է իրավաբանական փորձառության և տեխնիկական աջակցության տրամադրմանը՝ օգնելու ներպետական ինստիտուտներին իրականացնել բարեփոխումներ դատական համակարգի և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ: Այդ ծրագիրը կիրականացվի մինչև 2021 թվականը:

Արդեն իսկ առաջընթաց է գրանցվել հակակոռուպցիոն անկախ մարմինների և դատական բարեփոխումների ուղղությամբ: Աշխատանքները շարունակվում են քաղաքացիներին առավել արդյունավետ և որակյալ ծառայությունների տրամադրման և արդեն իսկ ձեռք բերված արդյունքների պահպանման ուղղությամբ:

ԳԼԿ-ի մեթոդներում համադրվում են իրավաբանական փորձառության, կարողությունների զարգացման, իրազեկության բարձրացման և գործընկերային վերլուծությունների, ներառյալ՝ կարիքների գնահատման, օրենսդրության վերանայման, համաժողովների և աշխատաժողովների, ցանցային համագործակցության և վերապատրաստման միջոցառումները՝ Եվրոպայի խորհրդի անձնակազմի և միջազգային փորձագետների գլխավորության ներքո: Ծրագիրը որդեգրել է բազմակի տեսակետների և շահագրգիռ կողմերի մոտեցում, որը հիմված է միջգերատեսչական համագործակցությանը: Բարձր աստիճանի բաց և ճկուն քաղաքականությունը ԳԼԿ-ի ուժեղ կողմն է, ինչի մասին են վկայում շահագրգիռ կողմերը և շահառուները: ԳԼԿ-ն նպատակ ունի ապահովել կարևոր, արդյունավետ և կայուն աջակցություն, ինչն արդեն իսկ հաստատվել է վերջերս իրականացված գնահատումներով:

HELP
CERTIFICATE
Certificate

REGIONAL STUDY
ON WOMEN'S POLITICAL
REPRESENTATION
IN THE EASTERN
PARTNERSHIP COUNTRIES

SCARA CASCADELOR
BISERICA "SF. PANTELIMON"

ԵՄ 2020 թվականի 9-րդ թիրախային արդյունք՝ Օրենքի գերակայության և հակակոռուպցիոն մեխանիզմների ամրապնդում

ԻՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԿԱՆ

- Կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտներում նորմերն ամրապնդող օրենքների ընդունում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում
- Գույքի հայտարարագրման և շահերի բախման ավելի արդյունավետ համակարգեր Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում
- Շահութաբեր սեփականության ավելի բարձր թափանցիկություն՝ որպես անօրինական ֆինանսական հոսքերի, փողերի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գլխավոր գործիք
- Իրավապահ մարմինների կարողությունների ընդլայնում՝ կոռուպցիայի դեպքերի հետաքննության նպատակով
- Քաղաքականություն մշակողների և իրականացնողների գիտելիքների բարելավում ապօրինի հարստացման դեմ պայքարի գործիքների կիրառման ուղղությամբ
- Բելառուսում և Վրաստանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգների գնահատման և իջեցման մեխանիզմների բարելավում
- Քրեական արդարադատության 400 աշխատակցի կարողությունների հզորացում՝ Ադրբեջանում և Վրաստանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննության, հետապնդման և դատական կարգով լուծման նպատակով

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ

- Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակների հետագա ամրապնդում՝ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) առաջարկություններին համապատասխան
- Գույքի հայտարարագրման և շահերի բախման համակարգերի հետագա կատարելագործում
- Կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների քննության, հետապնդման և դատական կարգով լուծման հետագա բարելավում
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարող կառույցների կարողությունների հետագա հզորացում
- Կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և կանխարգելման ոլորտներում տարածաշրջանային համագործակցության մեխանիզմների հետագա հզորացում

Եվրոպայի խորհրդի չափանիշներ և մշտադիտարկում

Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (GRECO) բացահայտում է ներպետական հակակոռուպցիոն օրենսդրությունների և քաղաքականությունների թերությունները և խրախուսում պետություններին իրականացնել անհրաժեշտ օրենսդրական, ինստիտուցիոնալ կամ վարչական բարեփոխումներ: Դրա գնահատումը հիմված է Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիաների վրա:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների հանձնախումբը (MONEYVAL) գնահատում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի արդյունավետությունը անդամ պետություններում:

ԵՄ 2020 թվականի 10-րդ թիրախային արդյունք՝ Աջակցություն առանցքային դատական բարեփոխումների իրականացմանը

ԻՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԿԱՆ

- Դատական հաշվետողականության ուժեղացում և համապատասխան օրենսդրության ընդունում Հայաստանում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ
- Դատարանների ավելի արդյունավետ ամենօրյա վարչարարություն Ադրբեջանում և Մոլդովայի Հանրապետությունում՝ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) գործիքներին և մեթոդաբանությանը համապատասխան
- Դատական տվյալների հավաքագրման և վերլուծության բարելավում՝ Ադրբեջանում և Մոլդովայի Հանրապետությունում պիլոտային դատարանների ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացման նպատակով
- Ներպետական դատարանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կիրառման բարելավում
- Դատական ոլորտում վերապատրաստման հաստատությունների կարողությունների հզորացում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում՝ դատական իրավասությունների և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների ավելի լավ կիրառում ապահովելու նպատակով
- Էթիկայի և կարգապահության ընթացակարգերի բարելավում Վրաստանում և Մոլդովայի Հանրապետությունում: Վրաստանի իրավաբանների 63 և Մոլդովայի իրավաբանների 56 տոկոսի կարծիքով՝ կարգապահական ընթացակարգերն ավելի արդար և ավելի արդյունավետ են
- Եվրոպական դատական չափանիշների վերաբերյալ գիտելիքների բարելավում Արևելյան գործընկերության դատական համակարգի ներկայացուցիչների շուրջ 70 տոկոսի շրջանում
- Կանանց համար արդարադատության մատչելիության կառույցների, քաղաքականության և փորձի բարելավում Արևելյան գործընկերության երկրներում

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ

- Օրենսդրական շրջանակի և դատական բարեփոխումների իրականացման մեխանիզմների հետագա ամրապնդում և աջակցություն թիրախավորված դատական բարեփոխումների իրականացմանը Արևելյան գործընկերության երկրներում
- Դատական հաշվետողականության արդյունավետ համակարգի հետագա ամրապնդում եվրոպական չափանիշների և լավագույն փորձի հիման վրա
- Արդարադատության մատչելիության հետագա բարելավում, մասնավորապես՝ կանանց համար
- Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի գործիքների կիրառման հետագա ամրապնդում՝ արդարադատության արդյունավետության և որակի բարելավման նպատակով
- Վերապատրաստման դասընթացների հետագա կատարելագործում և վերապատրաստման հաստատությունների կարողությունների հետագա բարելավում՝ դատական ոլորտի աշխատողների համար եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան վերապատրաստումներ իրականացնելու նպատակով
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կիրառման հետագա բարելավում
- Փաստաբանների միությունների և իրավաբանների միությունների միջև տարածաշրջանային համագործակցության հետագա ամրապնդում

Եվրոպայի խորհրդի չափանիշներ և մշտադիտարկում

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) աշխատանքը սևեռված է կառավարման գործիքների, լավագույն փորձի և ուղենիշների մշակմանը՝ արդարադատության որակի և արդյունավետության բարձրացման նպատակով: Այն հրապարակում է կանոնավոր զեկույցներ եվրոպական դատական համակարգերի գնահատման վերաբերյալ:

Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհուրդը նախապատրաստում է կարծիքներ, խթանում է Քրեական արդարադատության համակարգում Դատախազության դերի վերաբերյալ թիվ Rec(2000)19 հանձնարարականի կիրառումը և տեղեկություններ հավաքում Եվրոպայում դատախազության գործառնության վերաբերյալ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նախապատրաստում է կարծիքներ և խթանում է Եվրոպայի խորհրդի չափանիշների կիրառումը՝ Եվրոպայում դատավորների դերի հզորացման նպատակով:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի՝ սահմանադրական հարցերով խորհրդատվական մարմինն է, որն իրավաբանական խորհրդատվություն է տրամադրում ԵԽ անդամ պետություններին՝ նրանց հնարավորություն տալով իրենց իրավական և ինստիտուցիոնալ կառույցները համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին և միջազգային փորձին ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ոլորտներում:

Վենետիկի հանձնաժողովը օգնում է նաև ապահովել ընդհանուր սահմանադրական ժառանգության տարածումը և համախմբումը՝ կատարելով եզակի դեր կոնֆլիկտների կարգավորման գործում, և տրամադրում է «շտապ սահմանադրական օգնություն» անցումային փուլում գտնվող երկրներին:

ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Արագ արձագանքման մեխանիզմի (ԱԱՄ) ներքո Վենետիկի հանձնաժողովը կարող է իրավաբանական փորձառություն տրամադրել իր իրավասության ոլորտներում, ներառյալ՝ ժողովրդավարական ինստիտուտներ և հիմնարար իրավունքներ, հանրաքվեներ և քաղաքական կուսակցություններ, սահմանադրական և սովորական արդարադատություն:

Գենդերային հավասարության և խտրականության բացառման խթանում

Խտրականության դեմ պայքար և խոցելի խմբերի ու կանանց իրավունքների պաշտպանություն

Խտրականության բացառումը հավասարության սկզբունքի բաղկացուցիչ տարր է: Այն ապահովում է մարդու իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններ՝ անկախ մարդու ազգային կամ էթնիկական ծագումից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակից, սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: ԳԼԿ-ն նպաստում է խտրականության և ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի և խոցելի խմբերի ու կանանց իրավունքների պաշտպանության էական առաջընթացին:

ԻՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԿԱՆ

- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման բարելավում և դրա դեմ պայքար՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի ստորագրումը և վավերացումը Վրաստանի կողմից, կոնվենցիայի ստորագրումը Հայաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի կողմից
- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին օրենսդրության ընդունում Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի կողմից
- Կանանց համար արդարադատության մատչելիության բարելավում Արևելյան գործընկերության երկրներում՝ իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման, դատական վերապատրաստման հաստատությունների կարողությունների հզորացման և դատական ոլորտում վերապատրաստման ներդաշնակեցված գործիքների միջոցով

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ

- Ապահովել Արևելյան գործընկերության բոլոր երկրների միանալը Ստամբուլյան կոնվենցիային և կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրառումը
- Բարելավել խտրականության դեմ պայքարի քաղաքականության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, այդ թվում նաև ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի ոլորտներում
- Ամրապնդել «հավասարության հարցերով մարմինների» և՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները՝ խտրականության վերաբերյալ խոցելի խմբերին պատկանող անձանց բողոքների քննմանն աջակցելու նպատակով

Եվրոպայի խորհրդի չափանիշներ և մշտադիտարկում

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբը (GREVIO) անկախ փորձագիտական՝ մարմին է, որը պատասխանատու է կոնվենցիային միացած պետությունների կողմից՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) դրույթների կատարման համար:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) կանոնավոր մշտադիտարկում է ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության, հակահրեականության և անհանդուրժողականության խնդիրները 47 անդամ պետություններում և առաջարկություններ ներկայացնում անդամ պետություններին:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կոմիտեն մշտադիտարկման մեխանիզմ է, որը գնահատում է փոքրամասնությունների պաշտպանությունն անդամ պետություններում, նրանց՝ ազատ հավաքների, ազատ արտահայտման, խղճի և դավանանքի ազատության, լրատվամիջոցներից և իրենց լեզվից ազատ օգտվելու իրավունքը:

Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագիրը նպաստում է 2020 թվականի ԵՄ թիրախային արդյունքների ձեռքբերմանը, որոնք ուղղված են ԵՄ-ի և իր անդամ պետությունների և արևելյան վեց հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը և ամբողջ տարածաշրջանի քաղաքացիների համար շոշափելի արդյունքների ապահովմանը:

EaP | Eastern Partnership

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ՝

@partnershipgovernance

@CoeEapPCF

odgp_pgg@coe.int

http://partnership-governance2-eu.coe.int

PREMS 082719 – Photos: Council of Europe

HYE

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար իրավապաշտպան կազմակերպություններից մեկն է: Այն բաղկացած է 47 անդամ պետություններից, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, պայմանագիր, որը ստեղծված է մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը պաշտպանելու նպատակով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումն անդամ պետություններում:

www.coe.int

Եվրոպական միության անդամ պետությունները որոշել են միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Միասին նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պարտավորվում է կիսել իր նվաճումները և արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe